

յունուար)ին մէջ, էջ 13, ուր կը պատմուի .

«Ռուսաց Այլքս թագաւորին օրերը 1659ին Ասպահանցի Հայ վաճառականներէն Ջաքար Սարհատեան անունով մէկը, որ Պարսից փոխարքային ալ դործակալն է եղեր, ծովով Աստերիսան կուղայ, անկէջ ալ 1660-ին թագաւորական հրամանով Մոսքուա քաղաքն կը հասնի ինը ընկերներով: Ասիկա թագաւորին ընծայ կը բերէ մէկ պղնձի վերայ քաշուած պատկեր մը. Քրիստոսի ընթրիքն, մէկ ոսկիէ մատանի, այլ եւ այլ սուղ բաժակներ, աշնիւ ըմպելիքներ, ու անուշահոտ նիւթեր, բայց ամենէն երեւելի ընծան եղած է թագաւորական աթոռը որ Ջաքարին հայրը շիներ է եղեր: Ատոր շատ տեղը ոսկի է, ու վրան մեծ ու պղզտիկ 876 ադամանդ կայ, 1 լալ, 1223 յակինթ մանր ու խոշոր, երեք կարգ մարգարիտներով ձեւացուցած հրեշտակներ: Ան ատենի վաճառականները անոնց ամենու գինը կտրեր են 24,443 ռուպլի, որ հիմակուան արժէքով 5,500,000 զուրուշէն աւելի կ'ընէ: Թագաւորն ալ գրեթէ նոյնչափ ստակ կուտայ Սարհատեանին, անկէ զատ իրեն ուրիշ ընկերներուն թագաւորական ուճիկ կը կապէ, ան հինգ ամիսի չափ ժամանակ որ Մոսքուա կեցեր են, եւ ետքը իրենց տեղը կը ճամբէ: . . . Իսկ ան աթոռը Ռուսի թագաւորները հին ատեն կը գործածեն եղեր թագ դնելու օրերնին, մեծ տոներուն, Եկեղեցական ընդունելու ժամանակին: Հիմա միայն թագաւորը օծելու ատեն կը գործածեն Վերափոխման տաճարին մէջ. իսկ սովորաբար Կրանովիթայա Փալաթա ըսուած թանգարանը կը պահուի»: 8)

Ռուս պետական զեւաններուն մէջ պահուող արձանագրութիւն մը կ'ըսէ .—

«Սպահանից հայ վաճառական Սոջա Ջա-

8) Անդ՝ էջ 167: Նոյնը կուտայ նաեւ 1էօ իր «Սոջայական Կապիտալ»ի մէջ, էջ 91, ուր 24,443 սուրբիի համարժէք կը նշանակուի 550,000 զրուշ: «Բարձրագոյն»ի այս թիւը չունենալով՝ չեմ կրնար ըսել թէ այս երկու զրուշ համագումարներէն ո՞րը ճիշդ է:

քար Սահրաղեանը, մատուցանելու համար թագաւորին առեւտրական ընկերութեան կողմից, տարաւ ընծայ ոսկով եւ արծաթով ու ադամանդներով, յակինթներով եւ մարգարիտներով ընդելուզած բարկաթոռներ, որոնք դրնահատուած են 22,589 սուրբի 60 կոպէկ ինչպէս նաեւ ուրիշ ընծաներ: Դեսպանական Պրիկազի մէջ այս վաճառականը բացատրութիւններ տուց շնորհատանից թանկագին քարեր եւ թութակներ բերելու եւ Պարսկաստանից Ռուսաստան ոսկերիչներ, արծաթագործներ, յղկիչներ եւ այլ արհեստաւորներ հրաւիրելու մասին: Եւ նորից վերագարձուց Պարսկաստան»: 9)

Հետաքրքրական եւ յատկանշական տարբերութիւններ կան վերը արուած երկու վկայութեանց մէջ, որոնք գրեթէ իրար կ'ամբողջացնեն: Սպահանէն կուղար Սոջա Ջաքար Սահրաղեանը, Պարսիկ պետութեան իսկ գիտակցութեամբ եւ ինը ընկերներով, իրր ներկայացուցիչ Նոր Ջուղայ հայ «առեւտրական ընկերութեան»: Իր հետ բերուած իրերը, բընականաբար, կարելի չէ սոսկ նուէր նկատել, եւ արդէն ճարը կը հատուցանէ ատոնց փոխարժէքը դրամով: Ըստ երեւոյթին, այս «ընծան» կամ «ընծաները» առեւտուրի մէկ ընդունուած ձեւ մըն էր, ընծայողը միշտ կը ստանար ընծային արժէքը, եթէ ոչ աւելի: Սակայն, այս Սարհաղեան ձեռնարկին մէջ կար եւ ուրիշ նպատակ, որ էր՝ ցոյց տալ Նոր Ջուղայի «առեւտրական ընկերութեան» կարողութիւնը թէ՛ իրր արհեստաւոր եւ թէ՛ իրր առեւտրական: Ռուսերուն կը ներկայացուի հեռագատկեր մը «թանկագին քարեր եւ թութակներ բերելու»: Նոյն ատեն այս բերուած հում ապրանքը աւելի շահաբեր գործածելու համար, կ'առաջարկուի Պարսկաստանէն Ռուսաստան բերել «ոսկերիչներ, արծաթագործ-

9) «Սոջայական Կապիտալը», — էջ 91: 1էօ իր կարգին օգտուած է Ռուսերէն «Սօպրանիէ ակդով» հրատարակուած Մոսկուա, 1883, Ա. հատոր, էջ 328: